

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N1 -SS

**ՀՀ բնապահպանության նախարարին կից տեղեկատվական տեխնոլոգիաների
հարցերով խորհրդի նիստի**

Ք. Երևան

22.12.2017թ

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Արծվիկ Մինասյան ՀՀ բնապահպանության նախարար-խորհրդի
նախագահ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Խաչիկ Հակոբյան ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ,

Դավիթ Քոչարով «Միներջի Ինթերնեյշնլ Սիսթեմզ» Հայաստանի
մասնաճյուղ,

Գագիկ Հարությունյան «Անթել դիզայն» ՍՊԸ-ի տնօրեն,
Արեգ Գեդեոնյան «Այրես Զարգացման» հիմնադրամի խորհրդի
անդամ,

Աշոտ Մինասյան «Հիբրիդ տելեմատիկա» ընկերության
տեխնիկական տնօրեն,

Արմեն Վարդանյան Հայաստանի Հանրապետության
բնապահպանության նախարարության
աշխատակազմի տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի վարչության
պետ(քարտուղար):

Հրավիրվածներ

Խաչատուր Խաչատրյան Իրավաբանական վարչության պետ,

Նաիրա Ալավերդյան Քարտուղարության պետ,

Արամ Սայադյան Թափոնների անձնագրերի համաձայնեցման և
թույլտվությունների տրամադրման բաժնի պետ,

Մերի Բաբայան Անձնակազմի կառավարման բաժնի պետ,

Ասյա Մուրադյան	Կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության բաժնի պետ,
Վրոյր Պեպանյան	ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի մամուլի քարտուղար,
Արամ Աղասյան	Կենսառեսուրսների կառավարման գործակալության Բնության հատուկ պահպանվող տարածքների և դենդրոպարկերի կառավարման բաժնի պետ,
Սվետլանա Հարությունյան	Հայաստանում Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) Փոքր դրամաշնորհների ծրագիր,
Սամվել Մարտիրոսյան	Տեղեկատվական անվտանգության մասնագետ, մեդիա փորձագետ,
Արմեն Ասրյան	«Այրես զարգացման» հիմնադրամի նախագահ,
Մարգարետունի Քամայան	ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի խորհրդական:

Օրակարգում

Հարց.1

ՀՀ ԲՆ տեղեկատվական և նորարարական տեխնոլոգիաների ներդրման պահանջարկը

Հարց.2

Ushadir.am հարթակի գործարկման ամփոփ հաշվետվության ներկայացում

Հարց.3

Բնապահպանական հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման անհրաժեշտ կարողությունների ապահովման համակարգի ներդրման հետ կապված հարցեր

Բացման խոսքով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Մինասյանը- Ողջունելով խորհրդի անդամներին և հրավիրվածներին՝ բնապահպանության

Նախարարը շեշտեց, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներուժը և առկա ձեռքբերումները չափազանց քիչ են օգտագործվում տարբեր բնագավառներում, մասնավորապես՝ շրջակա միջավայրի պահպանման խնդիրների լուծման մեջ: Բացը լրացնելու նպատակով առաջարկեց խորհրդի նիստերն ավելի հաճախ գումարել: Տեղեկացնելով, որ 2017թ. գերատեսչությունը ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները փոքր ծավալով օգտագործել է բնության հատուկ պահպանվող տարածքների/ԲՀՊՏ-ների/ պահպանության խնդրի լուծման գործընթացում՝ առաջնային համարեց ՏՏ ոլորտի ներուժի լիարժեք և արդյունավետ ներգրավումը, ինչն էականորեն կնպաստի շրջակա միջավայրի պահպանությանը: Խորհրդի նախագահը նշեց, որ բնապահպանության ոլորտում ՏՏ ներգրավվածության հնարավորությունները շատ ավելին են, և դրանց իրացումը կնպաստի նաև այդ ոլորտի համար լրացուցիչ ֆինանսական միջոցների գեներացմանը և, հետևաբար՝ զարգացմանը:

Խորհրդի օրակարգը հաստատելուց հետո Ա.Մինասյանը խոսքը փոխանցեց օրակարգի առաջին հարցը ներկայացնող Ա.Վարդանյանին:

Ելույթով հանդես եկավ ՏՏ խորհրդի քարտուղար Ա.Վարդանյանը-Ներկայացրեց ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումների աշխատանքների համար տեղեկատվական և նորարարական տեխնոլոգիաների պահանջարկը:

Ելույթով հանդես եկավ Խ.Խաչատրյանը-Ներկայացրեց ՏՏ մասնագետների օգնությամբ նոր ՀՀ բնապահպանական իրավական-տեղեկատվական որոնողական համակարգ ստեղծելու առաջարկը:

ՏՏ անդամների կողմից առաջարկվեց- Օգտագործել գործող Arlis համակարգը՝ այնտեղ բացելով բնապահպանական բաժին:

Ելույթով հանդես եկավ Ա. Աղասյանը- Առաջարկեց մշակել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերի էլեկտրոնային տարբերակները՝ դրանցում մշտապես փոփոխություններ և լրացումներ կատարելու հնարավորությամբ, Բույսերի և կենդանիների կադաստրերի վարման էլեկտրոնային տարբերակները:

Ստեղծել բնության հատուկ պահպանվող տարածքների անձնագրային տվյալների էլեկտրոնային փաթեթները, լուսանկարների համադրման արդյունքում բույսերի և կենդանիների տեսակների նույնականացման, լուսանկարների վերծանման շնորհիվ անտառային տարածքի միավոր մակերեսում ծառերի խտության (և եթե հնարավոր է՝ ծառերի քանակի) որոշման ծրագրեր:

Ելույթով հանդես եկավ Խ. Հակոբյանը-Նշեց, որ արդեն կա ստեղծված ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքի տարբերակ և անհրաժեշտ է ընդամենը ծրագրային ապահովմամբ լուծել թարմացման հնարավորությունները:

Ելույթով հանդես եկավ Ա. Սայադյանը- Ներկայացրեց թափոններն ըստ վտանգավորության դասակարգման կադաստրի վարման էլեկտրոնային տարբերակի մշակման առաջարկը:

Ելույթով հանդես եկավ Մ. Բաբայանը-Առաջարկեց ստեղծել նոր ծրագիր՝ ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ի տնօրենների մրցույթների հարցազրույցի փուլի համար:

Ելույթով հանդես եկավ Ն. Ալավերդյանը- Ներկայացրեց ՀՀ բնապահպանության նախարարության արխիվի թվայնացման առաջարկ:

SS խորհրդի անդամներն առաջարկեցին- Դիտարկել արդեն գործող էլեկտրոնային արխիվային հարթակները:

Ելույթով հանդես եկավ Ա. Գեդեոնյանը- Ներկայացրեց Ushadir.am հարթակի գործարկման ամփոփ հաշվետվությունը: Գործարկվող կայքը հնարավորություն է տալիս բնապահպանական խնդիրներով մտահոգ քաղաքացիներին և իրավաբանական անձանց Հայաստանի Հանրապետության քարտեզի վրա առցանց տեղադրել ահազանգ, և նույն էլեկտրոնային պատուհանում պատասխանատու գերատեսչություններից ստանալ արձագանք, ինչը ոչ միայն կխթանի հասարակական վերահսկողական մեխանիզմի զարգացումը, այլև պատասխանատու գերատեսչությունների աշխատանքների թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացումը:

Ելույթով հանդես եկավ Մ. Քամալյանը- Ներկայացրեց բնապահպանական հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման անհրաժեշտ կարողությունների ապահովման համակարգի ներդրման հետ կապված հարցեր:

Առաջարկվեց ներկայացնել առաջարկների փաթեթ՝ տեխնիկական առաջադրանքներով:

Ելույթով հանդես եկավ Ա. Մինասյանը- Շնորհակալություն հայտնեց արդյունավետ աշխատանքի համար և SS խորհրդի անդամներին առաջարկեց ներկայացնել խորհրդի առաջիկա նիստի օրակարգային հարցեր:

Որոշվեց

Հանձնարարել՝

1. Խ. Հակոբյանին՝ Arlis իրավական ակտերի էլեկտրոնային համակարգն սպասարկող կողմի հետ քննարկել այնտեղ «Շրջակա միջավայր» բաժին բացելու հնարավորությունները:

2. ՀՀ ԲՆ աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալությանը՝ քննարկել և վերաձևակերպել ստորաբաժանման կարողությունների զարգացման վերաբերյալ ներկայացված առաջարկները:

3. Խ. Հակոբյանին՝ դիտարկել թափոնների կադաստրի, և ընդհանրապես շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների միասնական կադաստր ստեղծելու տեխնիկական առաջադրանքի մշակման հնարավորությունները՝ նկատի ունենալով արդեն առկա ջրային ռեսուրսների էլեկտրոնային կադաստրի ձևավորման փորձը:

4. «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն » ՊՈԱԿ-ի տեղեկատվական վերլուծական և տեխնիկական սպասարկման ծառայությանը՝ գնահատել Անձնակազմի կառավարման բաժնի առաջարկը:

5. Խ. Հակոբյանին՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի համաձայնությամբ առաջիկա շաբաթվա ընթացքում կազմակերպել քննարկում՝ հարթակը մշակող կազմակերպության հետ, ներկայացնել հարթակի կայացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը և առաջարկները:

6. Քարտուղարության պետ Ն. Ալավերդյանին՝ ներկայացնել ծրագիր համապատասխան լիազոր մարմնին ներկայացնելու նպատակով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների
հարցերով խորհրդի նախագահ



Ա. Մինասյան

Արձանագրեց
Ա. Վարդանյան